ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Սեպտեմբերի 11—12-ին տեղի ունեցավ ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի գիտական կոնֆերանսը։ Բացման խոսքով հանդես եկավ ՀԽՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ, արևելագիտության ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանը, որը կանգ առավ կոնֆերանսի հետապնդած խնդիրների վրա։ Կոնֆերանսում «Ռեգիոնալ կոնֆլիկտներ. ծագումնաբանության և տիպաբանության հարցեր» զեկուցմամբ հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Ն. Հ. Հովհաննիսյանը։ Ռեգիոնալ կոնֆլիկտները, ասաց նա, իրենց այժմյան բնույթով հանդես եկան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, գլխավորապես «սառը պատերազմի» ու դրան հաջորդած տարիներին և մեծապես ռազմաքաղաքական երկու հակադիր խմբավորումների միջև եղած հակամարտության արդյունք են։ Ուղղակի ռազմական բախումից խուսափելով՝ դրանք հակամարտությունը տեղափոխեցին «Օտարի դաշտը»։ Այդ կոնֆլիկտները հիմնականում առաջանում են Ասիայում ու Լատինական Ամերիկայում և իրենց դրսևորման ձևով ու զարգացման դինամիկայով տարբերվում են ինչպես տեղային, այնպես էլ գլոբալ կոնֆլիկտներից։ Դրանք, սակայն, ավելի հարում են գլոբալ կոնֆլիկտներին, քանի որ պարունակում են համաշխարհային կոնֆլիկտի վերածվելու միտում։ Զեկուցողը ռեգիոնալ կոնֆլիկտները տիպաբանորեն բաժանեց չորս խմբի և նկատեց, որ դրանցից յուրաքանչյուրը կոնկրետ լուծում է պահանջում։ Այժմ, վերջում նշեց Ն. Հ. Հովհաննիսյանը, երբ միջազգային հարաբերություններում ուղի է հարթում քաղաքական նոր մտածելակերպը, ռեգիոնալ կոնֆլիկտների հաղթահարման համար ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվել։

Պատմական գիտությունների դոկտոր Հ. Մ. Եզանյանը զեկուցեց «Իսլամական պետության Խոմեյնու կոնցեպցիան» թեմայով։ Նա նշեց, որ անցել է տաս տարի, ինչ Իրանում հաստատվել է իսլամական հանրապետություն, սակայն մինչև այժմ էլ հստակ պարզ չէ, թե ո՞րն է իսլամական պետության էությունը։ Ինչպես երևում է իսլամական պետության հիմնադիր Խոմեյնու աշխատություններից ու բանավոր ելույթներից, նա երբեք լիբերալ գաղափարների կողմնակից չի եղել։ Խոմեյնու «Իսլամական կառավարումը» գրքում խոսվում է «իսլամական համայնքի» և ոչ թե «իրանական ժողովրդի» մասին։ Նրա կարծիքով, կառուցվածքային փոփոխությունների հարկ չկա, քանի որ նախկին վարչակարգի կողմից «փչացած» ղեկավարների վտարումից հետո նոր ղեկավարները կդառնան բարոյական բարձր արժեքներ ունեցող մարդիկ։ Խոմեյնու կարծիքով դեմոկրատիան արևմտյան հասկացություն է, որը բացարձակապես անհամատեղելի է իսլամի հետ։ Ինչ վերաբերում է գործադիր իշխանությանը, ապա Խոմեյնու կարծիքով՝ քանի որ իսլամական հասարակարգի ժամանակ միայն ալլահն է իրավասու օրենքներ հաստատելու, ապա օրենսդրական ժողովը պետք է փոխարինվի պլանավորման ժողովով։ Վերլուծելով իսլամական պետության հիմունքները, զեկուցողը հանգեց այն եզրակացության, որ դրանք միայն տեսություններ են և անցած տաս տարիների ընթացքում չիրականացան։

Պատմական գիտությունների դոկտոր Շ. Խ. Մեհյանն իր զեկուցումը նվիրեց 1920-ական թվականների քրդական շարժումների գնահատությանը։ Դրանք զեկուցողի գնահատմամբ պատմագիտական գրականության մեջ ճիշտ չեն արժեքավորվել։ Դրանց բնույթի և գնահատման հարցերում ակներև են գռեհիկ սոցիոլոգիզմը և պատմականության բացակայությունը։ Շ. Խ. Մեհյանը քննվող ժամանակաշրջանի պատմաքաղաքական հանգամանքների, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և այդ մասին մարքսիստական տեսական դրականության հիմնադրույթների մանրազնին քննությամբ ցույց տվեց 1920-ական թվականներին ազգային անկախության համար քրդերի պայքարի օրյեկտիվ պատմական օրինաչափությունը և արդարացիությունը։ Նա նշեց, որ «անեքսիոնիստական» հասկացության բնութագրման ու դեմոկրատական արդարացի հաշտության կնքման պայմանների մասին Վ. Ի. Լենինի արտահայտած դատողությունների և մեր երկրի իշխանությունների միջև եղած հարաբերությունը ճանապարհ հարթեց թուրքական լծի տակ տառապող ժողովուրդների՝ քրդերի, հայերի, հույների ազգային նպատակների խեղաթյուրված ներկայացման ու գնահատման համար։ Հետաքրքրական էին զեկուցողի վերտարկումներն իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լոզունգի ոչ իրատեսական բնույթի և նման պարագաներում միա-

կողմանիորեն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների կողմից պարտվողականության քաղաքականության հռչակման նպատակահարմարության մասին։ Այդ քաղաքականությունը հանգեցրեց Բրեստի պայմանագրին ու Սևրի պայմանագիրն ի չիք դարձնելուն և պատերազմում պարտված Թուրքիայի կողմից ոչ միայն նվաճված քրդական, հայկական և այլ տարածքների պահպանմանը, այլև Արևելյան Հայաստանի հաշվին նորերի ձեռքբերմանը։ Շ. Խ. Մհոյանի կարծիքով հարցերի այս համակարգը կարոտ է վերագնահատման ու պատմական ճշտորոշման։

Պատմական գիտությունների թեկնածու **Վ. Լ. Վաղարշյանի** զեկուցումը նվիրված էր իսլամի և արաբական ազգայնականության փոխազդեցության ասպեկտներից մեկին։ Նա նկատեց, որ իսլամական աշխարհում առկա են ինչպես կենտրոնաձիգ, այնպես էլ կենտրոնախույս միտումներ։ Վերջիններս ձևավորվում են մասնավորապես ազգայնականության դրոշի ներքո։ Ազգայնական գաղափարախոսություններում իսլամի օգտագործումն այս կամ այն չափով հատուկ է մահմեդական համարյա բոլոր երկրներին։ Արաբական երկրներում այս երևույթն առավել բնական է արտահայտվում, քանի որ իսլամն արաբական միջավայրի ծնունդ է, արաբ ժողովրդի պատմական ժառանգության հիմնաքարը և որոշակի ժամանակաշրջանում, այն Է՞ վաղ միջնադարում, ընկալվել է որպես մի յուրօրինակ ազգային կրոն։ Սակայն հետագայում, զանազան հանգամանքների բերումով, այն կորցրեց իր ազգային դեմքը, ապազգայնացվեց, իսկ իրենք՝ արաբները, դուրս մղվեցին մահմեդական համայնքի առաջատար դիրքերից։ Արաբական ազգայնականության գաղափարախոսության զարգացումն իր հետ բերեց իսլամն արաբներին վերադարձնելու, և այն օտար, հատկապես թուրքական տարրերից ազատելու միտումը։ Դա են ապացուցում Եգիպտոսի, Լիբիայի և Սաուդյան Արաբիայի պաշտոնական գաղափարախոսությանը համապատասխան գրույթները։

«Երկու տեսակետ հայերի ցեղասպանության պատճառների վերաբերյալ» զեկուցմամբ հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր **Հ. Գ. Ինճիկյանը**։ *Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության պատճառների վերաբերյալ*, ասաց նա, գոյություն ունի երկու կարծիք։ Առաջինն այն է, որ հայ ազգային կուսակցությունների գործունեության և մեր ժողովրդի հասարակական կյանքի ակտիվացման հետևանքով թուրքական վերնախավն ուժեղացրեց հայերի հանդեպ բռնությունները և ի վերջո դիմեց ցեղասպանության։ Մինչդեռ հայ մեծահարուստները պահանջում էին քաղաքականության մեջ պահպանել չեզոք դիրքեր և լինել հավատարիմ հպատակներ, ինչպես հրեաները։ Այդ խորհուրդը հայերը չլսեցին և դրա պատճառով պատժվեցին։ Թուրք ջարդարարները և ժամանակակից պետական ու հասարակական գործիչները, հատկապես մտավորականությունը, որդեգրեցին այդ տեսակետը։ Երկրորդ տեսակետն այն է, որ մեր ազգային ողբերգությունը ծրագրված և նախապատրաստված հանցագործություն էր մարդկության հանդեպ։ Սկզբնական շրջանում պլանավորվում էր համաձուլելու միջոցով (օսմանիզմ) վերջ տալ երկրում ոչ թուրք տարրի գոյությանը։ Հետագայում, երբ գործնական քաղաքականության ելակետը դարձան պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսությունները, երբ բալկանյան ժողովուրդներն ազատագրվեցին թուրքական լծից, թուրքերն իրենց ազգային իդեալի՝ մեծ Թուրան ստեղծելու ճանապարհին արգելակող հանգամանք դիտեցին հայերին։ Դրա հետևանքով հայերի բնաջնջման և Հայաստանի ոչնչացման ծրագիրը ճշտվեց ու կոնկրետացավ, եզրակացրեց զեկուցողը։

«Օսմանիզմի գաղափարախոսությունը երիտ-թուրքական գործիչ Ջելալ Նուրիի աշխատություններում» զեկուցման մեջ պատմական գիտությունների թեկնածու **Ա. Հ. Փափազյանը** նշեց, որ օսմանիզմի գաղափարախոսությունը ծնունդ է առել դեռևս XIX դ. I կեսին։ Այն Օսմանյան կայսրության պետական մարմինների քաղաքական գործունեության ասպարեզ է մտել հիմնականում նպատակ ունենալով իրականացնել Թուրքիայի ոչ մահմեդական ժողովուրդներին մեկ «օսմանյան» ազգության մեջ միաձուլելու ծրագիրը։ Այդ գաղափարախոսությամբ թուրքական կառավարողները ձգտում էին կանխել կայսրությունում բուռն կերպով աճող ազգային-ազատագրական շարժման վտանգը։ Ապա զեկուցողը կանգ առավ երիտթուրքական հայտնի գործիչ Ջելալ Նուրիի՝ այլ ազգություններին օսմանացնելու խնդրում արտահայտած գաղափարների վրա։ Ջելալ Նուրին Թուրքիայի ոչ մահմեդական ժողովուրդներից բացահայտորեն պահանջում էր հաշտվել իրենց իրավազուրկ վիճակի հետ և հրաժարվել ազգային ձգտումներից։ Նա ամեն կերպ ձգտում էր համոզել, որ հայերը, քրդերը և արաբները չպետք է պայքարեն իրենց ազատագրության համար, քանի որ Թուրքիայում տիրապետող կարգերը, որոնք հիմնված են մահմեդական կրոնի վրա, ամենաառաջավորն ու իդեալականն են։ Փաստորեն, Թուրքիայում իսկական քաղաքացի էին հռչակվելու միայն թուրքերը կամ նրանք, ովքեր կթրքանային, կմոռանա-

յին սեփական լեզուն և կձուլվեին թուրքերի հետ։

Հանդես գալով «Օսմանյան կայսրությունում բարեփոխությունների քաղաքականության գնահատման հարցը» զեկուցմամբ, պատմական գիտությունների թեկնածու Մ. Տ. Բոջոյանը նկատեց, որ օսմանյան պետությունը ճգնաժամային հասարակարգի մի մոգել է, բազմազգ մի կայսրություն, որը բարեփոխությունների օգնությամբ փորձում էր խուսափել փլուզումից։ Փրկության դեղատոմսը պարունակում էր հետևյալ առաջարկները. ա) պետական սեփականության ձևերից անցնել մասնավոր սեփականության, բ) ստեղծել ժամանակի պահանջներին համապատասխանող վարչապետական համակարգ՝ օրենսդիր մարմիններ, կրոնից անկախ դատարաններ և այլն, գ) հռչակել բոլոր հպատակների իրավահավասարություն և այդպիսով հպատակ ժողովուրդներին պահել կայսրության կազմում։ Հռչակված բարեփոխությունները հիմնականում կրում էին դեկլարատիվ բնույթ և կոչված էին թուրքական գերիշխանությունը հավերժացնելուն ու կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելուն։ Հենց այս նպատակներն էլ պայմանավորեցին կայսրության կործանումը։

«Սելջուկների Փոքր Ասիա ներթափանցման հարցի շուրջը» զեկուցման մեջ Հ. Հ. Զաքրյանը նշեց, որ սելջուկ ցեղերի ներթափանցումը Փոքր Ասիա սկսվել է XI դ. 50-ական թվականների վերջերին, իսկ նույն դարի 70—80-ական թվականներին նրանք նվաճել են այն։ Ժամանակակից պատմագիտության մեջ, ասաց զեկուցողը, իշխում է այն տեսակետը, թե սելջուկների ներթափանցումը Փոքր Ասիա, սելջուկյան սուլթանների նպատակային քաղաքականության հետևանքն է և որ սուլթանները, որպեսզի ազատվեն քոչվոր ցեղերից, որոնք խոչընդոտում էին նրանց ծրագրերը, իրենց ցեղակիցներին գիտակցաբար մղել են դեպի Փոքր Ասիա։ Չնայած նման քաղաքականության առկայությունը կասկածից վեր է, չպետք է մոռանալ և այն հանգամանքը, որ դա պայմանավորված էր քոչվոր ցեղերի՝ Միջին Ասիայից դեպի Մեծ սելջուկյան պետության տարածքը կատարվող գաղթերով, որոնք սուլթանների համար բարդություններ էին առաջացնում։ Հետևաբար, խոսելով սելջուկյան ցեղերի Փոքր Ասիա ներթափանցման մասին, պետք է ելնել ցեղերի գաղթերի փաստից, հաշվի առնելով նաև նրանց և սուլթանների փոխհարաբերությունները, որոնք հաճախ կրում էին հակամարտ բնույթ։

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանը զեկուցեց «Նաիրի երկրները և Նաիրի երկիրը» թեմայով։ Նրա զեկուցումը հանգեց հետևյալին. ասուրական աղբյուրների «Նաիրի» անվանումը ըստ երևույթին իր հիմքում ոչ թե տեղանուն կամ ցեղանուն է, այլ ունի սոցիալական իմաստ ու, թերևս, նշանակում է «ցեղային (այսինքն՝ դեռևս պետականություն չունեցող) աշխարհ»։ Այդ պիտի լինի պատճառը, որ ասորեստանցիները նախապես (սկսած մ. թ. ա. XIII դ.) նրանով հորջորջում էին իրենց երկրի հյուսիսակողմը, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհը, իսկ հետագայում (մ. թ. ա. IX դ. վերջին—VIII դ. սկզբներին), մի կողմից հայ ժողովրդի կոնսոլիդացման, մյուս կողմից՝ Ուրարտու պետության զորեղացման հետևանքով, «Նաիրի» անվանումը տեղափոխեցին հյուսիս-արևելյան, դեպի Կասպից ծովի հարավային ափերը ձգվող երկրամասի վրա (հետագայի Ատրոպատականը), որտեղ տակավին զարգանում էր «ցեղային աշխարհը»։

Պատմական գիտությունների դոկտոր Ն. Վ. Հարությունյանն իր զեկուցման մեջ կատարեց մի շարք ճշգրտումներ, որոնք վերաբերում են Վանա լճից հյուսիս Բադնոցի մոտ հայտնաբերված՝ Մենուա թագավորի երեք արձանագրություններին։ Դրանք 1960 թ. «Anatolia» ամսագրում հրատարակել է Քեմալ Բալկանը։ Զեկուցողի առաջարկած ճշգրտումները հնարավորություն են ընձեռում լուսաբանելու Ուրարտուի հետ կապված մի շարք կարևոր հարցեր։ Մյուս կողմից, արձանագրությունները նպաստում են ճշգրտելու Արգիշտի I-ի խորխորյան տարեգրության որոշ հատվածների վերականգնումներն ու մեկնաբանությունները։

Էրեբունում գտնված կանացի արձանիկներին ու Անահիտ աստվածուհու աղամաններին էր նվիրված բանասիրական գիտությունների թեկնածու Ն. Ա. Մկրտչյանի զեկուցումը։ Զեկուցողի կարծիքով նախամոր, Մեծ մոր աստվածության պաշտամունքը գալիս է դարերի խորքից և տարբեր ժողովուրդների մեջ այլ անվանումներ է ունեցել. ավելին, նույնիսկ նույն ժողովրդի մեջ այն տարբեր ժամանակներում զանազան ձևով է կոչվել։ Հայոց մեջ հեթանոսական շրջանում կոչվել է Անահիտ, Նանա, իսկ քրիստոնեական մուտքից հետո՝ տիրամայր, Պառավ և այլն։ Այնուհետև, ելնելով 1970-ական թվականներին Էրեբունուց պեղված կանացի արձանիկների և հայկական աղամանների նմանությունից, Ն. Ա. Մկրտչյանն առաջ քաշեց այն վարկածը, որ դրանք քրիստոնեության մուտքից հետո ոչնչացված կուռքերն են և որ հայոց մեջ կուռքերի անլեզալ պաշտամունքն ի վերջո հանգեցրեց դրանց աղամանների վերածվելուն։ Զեկուցողը նկատեց, որ այդ նմանությունը թույլ է տալիս ենթադրություններ

անել հարևան սեմիտների հետ Հայաստանի ժողովուրդների սերտ կապերի մասին։

«Էթնո-քաղաքական իրադրությունը հարավ-արևելյան Փոքր Ասիայում» զեկուցման մեջ պատմական գիտությունների թեկնածու Ա. Վ. Քոսյանը նշեց, որ Փոքր Ասիայի հարավ-արևելյան շրջաններից հայտնաբերված լուվիերեն ուշ արձանագրությունների համեմատությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այստեղ մ. թ. ա. XII—XI դդ. խեթական պետության անկումից ոչ շատ անց ստեղծվել է լուվիական մի հզոր քաղաքական միավորում։ Վերջինս Փոքր Ասիայի արևելքում կազմավորված Մելիդ և Կարդամիս պետությունների հետ խեթական պետության ժառանգորդներից մեկն էր։ Սա թույլ է տալիս ենթադրելու, որ մ. թ. ա. 1200 թ. սահմաններում խեթական պետությունը ոչ թե արտաքին հարվածներից կործանվել է, այլ լոկ կորցրել է նախկինում իր նվաճած որոշ տարածքներ՝ կենտրոնական և արևմտյան Փոքր Ասիան։ Այդ իրադրությունը կարելի է պատկերացնել որպես կայսրության, այլ ոչ թե պետականության կործանում։ Զեկուցողը քաղաքական իրադարձությունների այս հենքի վրա փորձեց հերքել փոյուգիական և «նախահայկական» ցեղերի գաղթը Փոքր Ասիայի արևմուտքից դեպի Հայկական լեռնաշխարհ։ Նա մասնավորապես այն կարծիքը հայտնեց, թե Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններում ասորիստանյան արձանագրությունների հիշատակած մոշկերը ոչ թե Բալկաններից եկվորներ էին, այլ խեթական աղբյուրներից հայտնի Հայասայի բնակիչները։

Պատմական գիտությունների թեկնածու Ա. Ա. Բոզոյանը զեկուցեց «ԺԲ դարի 60—70-ական թվականների հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական փոխհարաբերությունների վավերագրերը (կաթողիկոսական թուղթ)» թեմայով։ Նա նշեց, որ XII դ. հայ-բյուզանդական փոխհարաբերությունները մուտք են գործում նոր շրջան։ Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը և Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանը քաղաքական պայքարի տարբեր ճանապարհներով փորձում են վերականգնել Հայոց թագավորությունը, հասնել նրա միշտգալին ճանաչմանը։ Զեկուցողը քննելով այդ ժամանակաշրջանից մեզ հասած փաստաթղթերը, ցույց տվեց, որ դրանց վերնագրերը բնագրային չեն և ավելացված են Հռոմկլայի ու Կոստանդնուպոլսի նոտարիատներում։ Կաթողիկոսական վավերագրի թղթառաշքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկեղեցաքաղաքական բանակցություններում կաթողիկոսն իրեն ստորադասում է բյուզանդական կայսրը։ Կոստանդնուպոլիս առաքված կաթողիկոսական թղթերը գրված են հայերենով. այդ է վկայում այդ վավերագրերից մեկի XII դարում կատարված հունարեն թարգմանության վերնագիրը։ Թղթերի բանաձևերից պարզվում է, որ Հռոմկլայում գրված վավերագրերը Կոստանդնուպոլիս են հասել երեք ամսվա ժամանակամիջոցում։

Ի. Մ. Ռաշչովայի զեկուցման խորագիրն էր՝ «Վահրամ Ջուբինի ապստամբության շրջանի բյուզանդա-իրանական հարաբերությունները և հայ ավագանու դիրքորոշումը»։ Զեկուցման մեջ քննվեց Իրանի ու Բյուզանդիայի պատմության VI դ. առավել դրամատիկ դրվագներից մեկը՝ Վահրամ Ջուբինի ապստամբությունը։ Ջնայած այդ իրադարձությունները միշտ էլ գտնվել են հետազոտողների տեսադաշտում, նրանք ուշադրություն չեն դարձրել այն փաստի վրա, որ Բյուզանդիայի արևելյան քաղաքականության հիմնական նպատակն Արևելքում առկա քաղաքական ուժերի հավասարակշռության պահպանումն էր։ Ինչ վերաբերում է «այդ հարցում հայ ավագանու դիրքին, ասաց զեկուցողը, ապա արաբ պատմիչ Դինեվարի համաձայն, միակ իրանական մեծատունը, որը հրաժարվեց աշակցել բռնատիրողին, հայ Մուշեղն էր։ Այդ հեղինակի հաղորդումից տեղեկանում ենք, թե հայ նախարարն ինչպիսի բարձր դիրքի կարող էր հասնել Սասանյան արքունիքում։ Առանձնապես ուշագրավ է, որ այստեղ իբրև լեգիտիմիզմի սկզբունքների պաշտպան է հանդես գալիս հայ մեծատունը։

Պատմական գիտությունների դոկտոր Պ. Մ. Մուրադյանն իր զեկուցումը նվիրեց Եղվարդի ծածկագրության թվականի ճշտմանը։ Նա իրավացիորեն նկատեց, որ վաղ միջնադարյան հայկական վիմագրերից առեղծվածների հարստությամբ բացառիկ է Եղվարդի բազիլիկի միատող վիմագիրը, ուր հողմնահարված կամ ընկած հատվածները վերականգնելու դժվարությանը գումարվում է կցագրերի ու փակագրերի առատությունը, իսկ վերջինիս՝ թվային արժեքներ բովանդակող ծածկագրությունը։ Արձանագրության քննությունից պարզվում է, որ գումարագիր և փոխարինագիր եղանակով շորսանգամ ծածկագրված է 660 թվականը։ Այն փաստորեն տաճարի կառուցման կամ վերակառուցման թվականն է, որով սրբագրության են ենթարկվում ճարտարապետության պատմության, թվարկության համակարգերի գործածության ժամանակագրության, հնագրության ու մշակութային պատմության մի շարք դրույթներ։ Զեկուցողի կարծիքով որոշակի հիմքեր կան պնդելու, որ վիմագրի տեքստի կազմողը Անանիա Շիրակացին է, որով Պ. Մուրադյանի շուրջ 15 տարի առաջ հրապարակած նախնական հաղորդման հարցադրումները լիովին հաստատվում են։

«Նոր էջեր և ճշգրտումներ Եղիա Մուշեղյանի կյանքի և գործունեության վերաբերյալ» զեկուցմամբ հանդես եկած Լ. Գ. Դանիելյանը նկատեց, որ XVIII դ. երախտավորներից մեկի՝ գրասեր, բանահավաք, հասարակական գործիչ, վաճառական Եղիա Մուշեղյանի մասին եղած գրականությունն առայժմ մեծ չէ, սակայն արդեն պարունակում է մի շարք անճշտություններ, որոնք վերաբերում են Եղիա Մուշեղյանի Դիվանի վերաբերյալ գրառումներին, քաղաքական-հասարակական հայացքների մեկնաբանմանը, կյանքի առանձին դրվագների քացահայտմանը։ Բավական է նշել, որ ճշգրտելի է անգամ Եղիա Մուշեղյանի ծննդյան թվականը։ Մյուս կողմից, ասաց զեկուցողը, Մուշեղյանի Դիվանին ի մոտո ծանոթությունն ի հայտ է բերում նոր փաստեր, որոնք նրա կյանքի ու գործունեության պատկերը լրացնելու սրոշ հնարավորություն են ընձեռում, միաժամանակ տալով հայ վաճառականի հավաքական կերպարը և կովաններ՝ վերականգնելու ժամանակին բնորոշ պատմական պրոցեսի այնպիսի կապակցությունների նկարագիրը, ինչպիսին է, օրինակ, անհատականություն-վարքագիծ-մտածողություն եռյակը։

Ֆրիկի հայատառ պարսկերեն քառյակը քննության ենթարկելիս բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Հ. Մովսիսյանը նշեց, որ այն սկսած 1952 թ. հետաքրքրել է հայ բանասերներին։ Ապացուցված է այն ճշմարտությունը, որ Ֆրիկը, իրոք, տիրապետել է պարսկերեն լեզվին, քաջ ծանոթ է եղել պարսկական պոեզիային և հայատառ դարձնելով պարսկերեն քառյակը, ինքն էլ թարգմանել է այն և զետեղել իր «Դիվանում»։ Խնդիրն այն է, որ մինչև այժմ քառյակի հեղինակն անհայտ է։ Զեկուցողն իր հայտնաբերած փաստական տվյալներից ելնելով եզրակացրեց, որ քառյակի ամենահավանական հեղինակը Ֆրիկին համարյա ժամանակակից XII դ. նշանավոր պարսիկ միստիկ բանաստեղծ՝ Ջալալ էդդին Ռումին է։

Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ե. Կոզմոյանի զեկուցման թեման էր՝ «Նարեկացի և Ռուդաքի (պատմա-համեմատական ուսումնասիրության փորձ)։ Նարեկացին և Ռուդաքին (պարսկական դասական գրականության հիմնադիրը), նշվեց զեկուցման մեջ, ապրել և ստեղծագործել են X դ.՝ արևելյան աշխարհի տարբեր ռեգիոններում, դավանել են տարբեր կրոններ, պատկանել տարբեր էթնոսների և ստեղծագործել են տարբեր ժանրերով։ Նրանցից մեկն ազդարարել է աստվածային սերը, մտածելով սիմվոլներով, իսկ մյուսը՝ աշխարհիկ սերը, մտածելով կենդանի պատկերներով. առաջինը գովերգել է աստծուն ձաղկելով իրեն, մյուսը գովերգել է սիրուհուն, մեկենասին և ինքն իրեն։ Սակայն երկուսն էլ էլիտար արվեստի շատագովներ են, ծառայում են երկու հզոր սոցիալական ինստիտուտների (եկեղեցի, արքունիք)։ Նրանց արվեստն ուներ որոշակի նպատակաուղղվածություն և սոցիալական կողմնորոշում։ Այդ բոլորը ծնում էին նրանց պոեզիայի տիպաբանական ընդհանրությունները, որոնցից են գեղարվեստական խոսքի նկատմամբ ունեցած մոտեցումը (հանդիսավոր պերճախոսություն), նկարագրման մեթոդը (իդեալականացում) և այլն։

«Արբի Հովհաննիսյանը և իրանական թատրոնի «նոր ալիքը» թեմայով զեկուցմամբ հանդես եկած բանասիրական գիտությունների թեկնածու Լ. Հ. Շեխոյանը մասնավորապես նկատեց, որ պարսիկ հեղինակների վկայությամբ Իրանում նոր, եվրոպական բնույթի թատրոնի սկզբնավորման և զարգացման գործում 1960—70-ական թվականներին ալքի ընկնող դեր է խաղացել թատերական գործիչ Արբի Հովհաննիսյանը։ Նա գործունեություն է ծավալել Իրանի ազգային ռադիոյի և հեռուստատեսության փորձարարական թատերական ստուդիայի, արվեստի իրանական միջազգային ամենամյա փառատոների, ինչպես նաև դանազան թատերախմբերի շրջանակներում։ Այդ գործունեության առանցքը համաշխարհային թատերարվեստի նորագույն նվաճումների և իրանական գեղարվեստական ավանդական միջոցների համաձուլումն էր։

Գիտական կոնֆերանսի արդյունքներն ամփոփեց Գ. Խ. Սարգսյանը։